

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կիտչենէրի վերջին յայտարարութիւնը.—Ազատական կուսակցութեան նոր ֆրակցիա Անգլիայում.—Չեմբերլէնը իբրեւ Բիսմարկի հետեւող.—Անգլիական լեզուի գերիշխութեան հարցը Մալտա կղզում.—Աղգերի համերաշխութիւն և ուժեղների ստիպողութիւն.—Կոպիտ ոյժի կուտը.—Նիցշէականութիւնը, իբրեւ ուժեղ անհատականութեան սանձարձակութիւն.—Կլադսոունի շկօլայի մարդիկ.—Ֆրիդրիխ-Վիկտօրիա կալստունու մահը.—Կրիսպին լեղափոխական և Կրիսպին իբրեւ պետական անձ.—Ֆրանսիայի և Ռուսաստանի բարեկամութեան նոր ցոյց:

Րօզսի, Չեմբերլէնի և Միլնէրի ջանքերով Հարաւային Աֆրիկայում սկսուած դժբախտ պատերազմը շարունակում է երկու կողմից էլ զոհեր տանել: Բօտայի և Դեվէտի յամառութիւնը կոտորելու համար անգլիական կառավարութիւնը թոյլ տուեց Կիտչենէրին հրատարակել մի բարբարոս յայտարարութիւն, որով բոլոր այն բօէր զօրապետները, որոնք մինչև սեպտ. 15-ը անձնատուր չեն լինի—ընդմիշտ պիտի աքսորուեն Հարաւային Աֆրիկայից: Բայց ոչ որ չէ հաւատում, որ «հայրենիքի լիակատար ազատութեան» պաշտպան բօէրական հերոսների վրայ որ և է ազդեցութիւն կ'անի այդ նոր սպառնալիքը: Չեմբերլէնը կամաց-կամաց սկսում է անգլիական պետական կեանքում պատուաստել Բիսմարկեան միջոցներ: Անգլիայի ազատական վեհ սկզբունքները, ինչպէս երևում է, սկսել են մոռացուել: Բաւական չէր կարծես Իրլանդիայի ատելութիւնը, բօէրների և աֆրիկանդէրների թշնամութիւնը, Չեմբերլէնը այժմ գրգռում է Մալտա կղզու ազգաբնակչութեան ինքնասիրութիւնը: Այդ կղզու մի բուն ժողովուրդը միշտ հաւատարմութիւն է ցոյց տուել Բրիտանիային, վայելելով ազատ անգլիական կարգեր և շարունակելով պահպանել իր մայրենի իտալական լեզուն: Այժմ Չեմբերլէնը հրամայում է, որ այսուհետև Մալտայի դպրոցներում տիրապետող լեզուն դառնայ անգլիա-

կանք: Յաւալին այն է, որ Չեմբերլէնի իմպերիալիզմը համախոհներ է գտնում նաև ազատական կուսակցութեան մէջ: Ինչպէս որ իրլանդական home roules-ը Գլադստոնի ժամանակ անջատում առաջացրեց ազատական կուսակցութեան մէջ և Չեմբերլէնը իր համախոհներով կազմեցին լիբերալ-ունիօնիստների ֆրակցիա, նոյնպէս և այժմ Հարաւային Աֆրիկայի պատերազմը դնելով իմպերիալիզմի հարցը այդ կուսակցութեան առաջ՝ կարող է նոր ֆրակցիա կազմելու պատճառ դառնալ: Ազատական կուսակցութեան մէջ Ասկվիտը, Բոգրէրին և միւսները իրանց իմպերիալիստական հայեացքներով աւելի մօտենում են Չեմբերլէնին քան Գլադստոնի տրադիցիաներին հաւատարիմ Կեմպբէլ-Բաններմանին, Մօրլէյին, Հարկօրտին, Լաբուշէրին և այլն: Թէև անջատումը չի կատարուել, բայց, այնուամենայնիւ, չատ որոշ է այդ նոր ֆրակցիայի՝ լիբերալ-իմպերիալիստների—տարբերութիւնը Գլադստոնեան ազատականութիւնից: Մենք արդէն մի անգամ (Մարտ) առիթ ունեցանք ասել որ իմպերիալիզմը անգլիական շօվինիզմն է, այսինքն անգլո-սակսօնական ցեղի գերիշխանութեան մի ձգտում: Ծիշտ է, Ասկվիտը «իմպերիա» ասելով հասկանում է ազատ և ինքնավար հասարակութիւնների դաշնակցութիւն (ֆեդերացիա), սակայն ինչպէս հաշտեցնել ազատութեան սկզբունքի հետ այն բռնի միութիւնը, որ ուզում են ստեղծել՝ ստիպելով բօէրներին, հակառակ իրանց բարի ցանկութեան, մանկ անգլո-սակսօնական դաշնակցութիւնների մէջ: Սուինի ոյժով չի կարելի ստիպել սիրել որոշ կարգեր: Եւ անկասկած Գլադստոնը իր մարդասէր քաղաքականութեամբ աւելի շուտ գլուխ կը բերէր ազգերի համերաշխութեան գործը, քան Բիսմարկը՝ արեան և երկաթի քաղաքականութեամբ:

Ոյժի պաշտամունքը Բիսմարկի չնորհիւ միջազգային յարաբերութիւնների մէջ դառաւ մի սովորական երևոյթ: Դուրս էր գալիս որ ուժեղ մի ազդ, ինչպէս և անհատ, կարող է ոչ մի բանից չը քաշուել և անել ինչ որ թելադրում է նրա ինստիտուտը: Խիղճը, բարոյականութիւնը դառնում են թոյլերին և ստրուկներին վայել զգայմունքներ: Իզուր չէ այդ ժամանակակից ոգին ծնել և իր փրկօրհայութիւնը: Իզուր չէ Նիցշէականութիւնը հիմա մօզային ումունք դարձել: Անհատականութեան սանձարձակ, վայրագ արտայայտութիւն—անհա այդ փրկօրհայութեան հանրամատչելի էութիւնը: Ուժեղ անհատականութեան տէր անձին, «գերմարդուն», ներելի է ամեն բան. ոչ մի բարոյական սկզբունք նա չը պէտք է ճանաչի, և արհամարհելով խիղճ, արտօրիզմ և այլն՝ նա պէտք է վարուի իր ազատ

բնաղղների համաձայն: Իբրև «գերմարդու» տիպար Նիցչեն բերում է յայտնի Յեզար Բորջիային: Տառնակցեցրորդ դարում ապրող այդ իտալացի իշխանը իդէալ էր և Մակկիավելի համար: Յեզար Բորջիան իր նշանաբանն էր դրել «Aut Caesar aut nihil!» (կամ Կեսար կամ ոչինչ), և իր նպատակներին հասնելու համար ամեն միջոց ներելի էր համարում: Նա սպանեց իր եղբորը, բռնաբարեց իր քրոջը, անթիւ սպանութիւններ կատարեց. առհասարակ թունաւորել հակառակորդին, խաբել, ուխտադրուծ լինել սովորական էր նրա համար:

Այժմ ուժեղները նոյնն են անում, բայց աւելի ստոր են քան Յեզար Բորջիան, որովհետև աշխատում են իրանց արարքները սքողել, փարիսեցիական զանազան սկզբունքներ հնարել, «վեհագոյն շահերով» արդարանալ: Իսկ եթէ այդ կեղծաւորութիւնը մի կողմ դնէք, կը տեսնէք որ Մակկիավելի վարդապետութեան հաւատարիմ հետևողներ են պետական մարդկանց մեծագոյն մասը: Բիսմարկը միայն դրանց խոշոր, տիպիկական ներկայացուցիչն էր: Իզուր չէր նրա աշակերտ Վիլհելմ II-րդը բարեկամ անուանում սուլթանին հէնց այն բոլէրին, երբ ծերունի Գլադստօնը «մեծ մարդասպան»-ի չարագործութիւններն էր մերկացնում: Իզուր չէր նոյն Վիլհելմը Գերմանիայի զինուորներին Չինաստան ուղարկելիս պատուիրում—չը խնայել ոչ որի և հոնական անգլութիւններով յաւերժացնել գերմանական անունը հեռաւոր արեւելքում... Անշուշտ նիցչեական է և Վիլհելմ II-րդը, ինչպէս նիցչեական էր և Բիսմարկը: Բոլորովին հակառակ համոզմունքի մարդիկ էին Վիլհելմի թէ հայրը և թէ մայրը: Այս վերջինը, կայսրուհի Ֆրիդրիխը, որ վախճանուեց յուլիսի 27-ին, Գլադստօնի երկրպագուներին էր և իր բարեբար ազդեցութիւնը հաղորդել էր և իր ամուսնուն՝ դժբախտ Ֆրիդրիխ կայսրին: Հանգուցեալ Ֆրիդրիխ Վիկտօրիա կայսրուհին իր հետ Անգլիայից պրուսական արքունիքն էր բերել Գլադստօնեան ազատամտութիւնը, պարզութիւնը և մարդասիրութիւնը, սէրը դէպի սահմանադրական կարգերը, գիտութիւնն ու գեղարուեստը: Յայտնի է նրա խոր ատելութիւնը դէպի Բիսմարկը և բարեկամութիւնը Վիլհելմի հետ: Կայսրուհին, ինչպէս և նրա ամուսինը, կարող էին համարուել Գլադստօնի չլօւլայի մարդիկ, մինչդեռ նրանց որդին՝ Բիսմարկի դպրոցի ծնունդ է: Այդ չլօւլայում կատարելագործեց իր պետական կրթութիւնը և մի այլ քաղաքական գործիչ, որ վախճանուեց յուլիսի 29-ին: Մեր խօսքը Կրիսպին մասին է: Շատ ուսանելի է այն փոփոխութիւնը, որ կատարուեց այդ իտալական գործիչի մէջ նրա երկար և ըստ-

մակողմանի կեանքի ընթացքում նախկին դաւադիր-յեղափոխականը, ծայրայեղ արմատականը, «բոլոր ազգերի եղբայրութեան» ջատագովը, Մաձձինիի և Գարիբալդիի հետ հայրենիքի միութեան և ազատութեան համար աշխատած դեմօկրատը յետոյ, կառավարութեան գլուխ անցնելով, սկսում է կամաց-կամաց դառնալ միապետական, բուրժուազիայի պաշտպան, զիկտատօր։ Իր դիրքը ամրացնելու համար նա չի քաշուում և՛ պօլիցիական ճնշումներից, և՛ ապօրէն հալածանքներից։ Քաղցած ամբոխի արդար բողոքը խեղդելու համար նա չի ամաչում գինուորական ոյժի դիմել։ Ուշադրութեան արժանի է այն որ Կրիսպին նկատելի կերպով սկսում է փոխուել դէպի վատը այն ժամանակից, երբ նա մօտենում է Բիսմարկին։ Ինքը ընկնելով Բիսմարկի ազդեցութեան տակ և Իտալիան գործիք դարձնելով Գերմանիայի ձեռքում, Կրիսպին ոչ միայն մոռանում է «ազգերի եղբայրութեան» գաղափարը, այլ նոյն իսկ 1889 թուին առաջարկում էր Կրէտէն խաղաղացնելու համար ուղարկել այնտեղ... Շաքիր-փաշային։

Բիսմարկը ճարպիկութեամբ օգտուեց Պրանսիայի կողմից Տունիսին տիրելուց, իր թակարդը գցելու համար Իտալիան։ Իտալական չօվինիզմը չէր կարող հաշտուել որ հին Հռոմի ժառանգութեան—Տունիսին, տիրեն ուրիշները։ Եւ ահա, չը նայած որ Իտալիայի թէ առևտրական և թէ կուլտուրական շահերն աւելի պահանջում էին մերձենալ Պրանսիային, քան Գերմանիային, նա այնուամենայնիւ Կրիսպիի ջնորհիւ մտաւ եռապետական դաշնակցութեան մէջ։

Աղքատ Իտալիան կաշուից դուրս էր գալիս իր զօրքով ու նաւատորմիդով յետ չը մնալ իր դաշնակիցներից, երկիրը տնտեսապէս քայքայւում էր, իսկ Կրիսպին երազում էր Տունիսի փոխարէն Աֆրիկայում մի այլ գաղթավայր ձեռք բերել։ Յայտնի է թէ ինչ վախճան ունեցաւ այդ բախտախնդրական արշաւանքը 1896 թուին։ Մենելիքի հարուածից գլորուեց և ինքը Կրիսպին իր ղեկավարող զիւրքից, նա հեռացաւ քաղաքական ասպարէզից և կորցրեց իր ժողովրդականութիւնը այն աստիճան, որ մշտական երկիւղի մէջ էր նոյն իսկ իր անձնական ապահովութեան նկատմամբ։

Կրիսպիի տապալուելուց յետոյ Իտալիան թէ և սկսեց մօտենալ Պրանսիային, բայց խզել իր կապերը եռապետեան դաշնակցութիւնից չէր կարող։ Իսկ Պրանսիան այնքան ճարպիկ գտնուեց որ մենակ չը մնաց Բիսմարկի ստեղծած վտանգի առաջ։ Հանրապետական Պրանսիան ձեռք բեկնեց միապետական

Ռուսաստանին: Այդ երկպետեան բարեկամութեան մի փառաւոր ցոյց էր 1898 թուին ռուսաց Կայսերական Ձոյգի այցելութիւնը Ֆրանսիային: Այնուհետեւ թէ Ֆրանսիան և թէ Ռուսաստանը զօրեղացնում էին իրանց ծովային ոյժերը: Եւ այժմ Ֆրանսիան դարձեալ ցնծում է սպասելով բարեկամ պետութեան միահեծան Պետին՝ մեծ զօրանանդէսներում ցոյց տալու համար Նրան թէ իր հզօր նաւատորմիցը և թէ կազմ ու պատրաստ զօրքը:

Լ. Ս.